

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

* * *

ՄԿՀ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆՑ ԾԻՐԻՆ ՄԷՁ

Կրթական մարզը եղած է ու պիտի շարունակե մնալ ծրագրային կարեւոր բնագաւառ մը Հ.Բ.Ը.Միութեան համար: Անցնող 98 տարիներու իր պատմութեան ընթացքին, Բարեգործականը նիւթաբարոյական հսկայ ներդրումներ կատարած է գաղթաշխարհի մէջ, հաստատելով ուսումնական այլազան ծրագիրներ, որոնք գոհացում տուած են հայութեան կարիքներուն: Տրուած նախապատուութիւնն ու շեշտը համապատասխան եղած են կազմակերպութեան ընդհանուր առաջնութեան—պահել ու զարգացնել հայկական ինքնութիւնն ու ժառանգութիւնը՝ կրթական, մշակութային ու մարդասիրական ծրագիրներով: Իրերայաջորդ տասնամեակներուն, Բարեգործականը հետապնդելով իր կրթական առաջնութիւնը, յատուկ ծրագիրներ տրամադրած է այլազան համայնքներու իւրայատուկ կարիքներուն համապատասխան: Առնուած են նման նախաձեռնութիւններ—որբանոցներ, դպրոցներ, կրթանպաստներ, փորձառական վարժութեանց յայտագիրներ, ուսումնական նամբորդութիւններ, եւն. տարբեր ժամանակներու կարիքներուն համաձայն:

Բարեգործականի հիմնական գործիւններէն մին կը կայանայ պատշանելու իր կարողութեանը մէջ հայկական իւրաքանչիւր սերունդի զարգացող պահանջներուն եւ կարիքներուն, հաստատելով նոր ծրագիրներ: Ժամանակներու համապատասխան, հայկական ինքնութիւնը կարելի է պահել եւ զարգացնել կրթական հաստատութիւններու միջոցաւ, ինչպէս նաեւ նպատակայարմար զանազան տարբեր յայտագիրներով: Դաստիարակութիւնը պէտք է ըմբռնել իր լայն առումով, ակադեմիական սահմաններէն անդին, իբրեւ

կենդանի գործունէութիւն՝ բոլոր տարիքի խմբաւորումներուն համար:

Երբ կազմակերպութիւնը կը դիմատրէ իր հիմնադրութեան հարիւրամեակը՝ Միութեան ղեկավարութիւնը հարկադրանքին առջեւ կը գտնուի վերարժեւորումի ենթարկելու իր կրթական առաջնութիւնը, հայաշխարհի բարդ պահանջներու լոյսին տակ: Ինչ որ ձեռնարկ է Միջին Արեւելի մէջ, անհրաժեշտօրէն ի գորտ չէ Եւրոպայի համար: Հարաւային Ամերիկայի կարիքները կրնան տարբեր ըլլալ Հիւսիսային Ամերիկայի հայկական համայնքներու պահանջներէն: Այս վերջին տարիներուն, Բարեգործականի ղեկավարութիւնը սկսած է վերարժեւորումի ենթարկել իր կրթական աշխարհատարած ծրագիրները, կարենալ բնորոշելու համար ամէնէն արդիւնագոր միջոցները, դիմագրաւելու պարզօրոյ ծաւալուն մարտահրաւերները եւ շարունակելու անցեալ մէկ դարուն որդեգրուած նախաձեռնութիւնները: Յատկապէս, Միութիւնը լայն վերագնահատումի ենթարկած է տասնըմէկ երկիրներու մէջ գործող իր ամենօրեայ վարժարաններու ցանցը, հաստատելու համար թէ իւրաքանչիւրը որքանով կ'արդարացնէ իր գոյատեւումը՝ նոր սերունդին նախապատուութիւններուն նկատմամբ: Հ.Բ.Ը.Միութիւնը կը ջանայ յայտնաբերել ընթացիկ այն նիւթերը, որոնք առաւելագոյն հաւանականութիւնն ունին յաջողութեան: Միութիւնը կ'առաջնորդուի այն սկզբունքով, որ տրուած դաստիարակութիւնը համապատասխանէ որակի բարձրագոյն մակարդակին եւ տեղական տնտեսական պայմաններն ու շրջանի գաղութները արդարացնեն տունալները կենսագործելի վարժարանի մը:

Դժբախտաբար, ցառով կը հաստատենք, թէ Բարեգործականի կարգ մը դպրոցները—սփիւտֆահայ քանի մը այլ վարժարաններու նման—կը դիմագրանեն աշակերտութեան թիւի նուագում, ծախսերու յարանուն յաւելումով: Այս երեսոյթը արդիւնք է բազմաթիւ ազդակներու. նոր սերունդին լիաւորումը տուեալ երկիրներու լայն հոսանքներուն մէջ, հանրային թէ անհատական օտար հաստատութեանց հրապոյրը, ինչպէս նաեւ շատ մը հայ երիտասարդ ծնողաց այն համոզումը, թէ իրենց զաւակները օտար վարժարաններ յանձնելով, պիտի կարենան ապահովել անելի յաջող ապագայ մը: Հ.Բ.Ը.Միութիւնը, դրուատելով հանդերձ իր կրթարաններուն ակադեմական կարեւոր ներդրումները տարիներու ընթացքին, գերազանցապէս էական կը նկատէ զանոնք վերաբոժեւորել տեսնելու համար թէ ներկայիս մեր ուսումնարանները կը համապատասխանե՞ն այսօրուան Միութեան ակնկալած չափանիշներուն, ինչքանով կ'արդարացնեն Բարեգործականի կրթական առաքելութիւնը: Նման քննարկումէ մը ետք, կարելի պիտի ըլլայ կայացնել հիմնաւորուած որոշումներ, զօրավիգ կանգնելու համար ընթացիկ յաջող ծրագիրներուն ի հարկին բարելաւելու կարգ մը այլ աշխատանքներ, եւ ապա լուծումներ որոնելու դժուարութիւններ դիմագրաւող պարագաներուն:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսումնական ծրագրի ապագայ ուղղութիւնները սահմանելու համար, կարեւոր է հասկնալ եւ խորհրդածել Հ.Բ.Ը.Միութեան պատմական իրագործումներուն վրայ: Կարելի է բնորոշել երեք յստակ շրջաններ՝ տարբեր պահանջներով:

1906ին, իր հիմնադրումէն ի վեր, Բարեգործականի կրթական առաջին ճիւղերը ուղղուած էին Օսմանեան Իշխանութեան տակ ապրող հայութեան կարիքներուն: Արդարեւ, Հ.Բ.Ը.Միութիւնը մասնաւորաբար նպաստներ ու կրթաթոշակներ յատկացուց իր ծննդավայրին մէջ ապրող հայութեան որբանոցներուն ու դպրոցներուն: 1909էն 1914 Կեդր. Վարչութիւնը հաստատեց նուագագոյն 40 վարժարաններ Արեւելեան Անատոլիոյ հայկական գիւղերուն ու քաղաքներուն մէջ: Այս հանգրուանին, հայութիւնը կարիքն ունէր նմանօրինակ ուսումնական նախաձեռնութիւններու, որոնց ընդառաջեց Միութիւնը համապատասխան միջոցներով:

Հայկական Ցեղասպանութեան հետեւանումով ամէն ինչ փոխուեցաւ: 1915-1921ի միջեւ մեր նորակազմ Միութիւնը զրկուեցաւ իր ամէնէն կարեւոր կոուաններէն: Առ յաւելու կորած էին բոլոր որբանոցներն ու դպրոցները իրենց լրիւ աշակերտութեամբ եւ ուսուցչակազմով: Ողբերգական մէկ հարուածով արմատախիլ եղած էին տասնամեակի մը բոլոր ջանքերը: Անգամ մը եւս ընդառաջելով ժամանակի պահանջներուն, Հ.Բ.Ը.Միութիւնը հարկադրուեցաւ զօրակոչի ենթարկել իր միջոցները, կրթական իր ծրագիրները տեղափոխելով դէպի հայկական այն հոծ գաղութները, ուր ապաստան գտած էին գաղթականները:

Ցեղասպանութեան անմիջական վաղորդայինին, Միութիւնը մինչ մեծ ճիւղեր կը գործադրէր, մարդասիրական օգնութիւն մատակարարելով գաղթականներուն, միաժամանակ շարունակեց կրթական իր կենսական առաքելութիւնը: Կազմակերպուեցաւ գաղթական մանուկներու դաստիարակութիւնը, յանձնարարելով վրաններու տակ կամ՝ բացօդայ: Համայնները երբ հետզհետէ տեղաւորուեցան, Միութիւնը, նախկինին պէս, վերսկսաւ յատկացումներ կատարել ուսումնական կառոյցներու ստեղծումին համար: Կարն ատենէն, Միջին Արեւելքի հայութիւնը, յատկապէս Սուրիոյ ու Լիբանանի մէջ, կարողացաւ անգամ մը եւս սեփական ուժերով ապահովել իր զաւակներուն ուրոյն կրթութիւնը: Նման արդիւնքի մը կարելի եղաւ հասնիլ շնորհիւ այդ երկիրներուն մէջ գտնուող դրութեան, որ հայերուն նման փոքրամասնութիւններուն կ'ընծայէր յարաբերական ինքնավարութիւն: Հայկական համայնները տեղւոյն հասարակութեան մէջ չճնշուեցան եւ կրցան պահել ու զարգացնել իրենց ազգային յատուկ ինքնութիւնը: Այս իրողութեան յոյսին տակ, 1926ին, Կարապետ ու Գրիգոր Մելգոնեան եղբայրները Բարեգործականին վստահեցան Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, որ պիտի ծառայէր իբրեւ որբանոց Նիկոսիոյ (Կիպրոսի) մէջ:

Հ.Բ.Ը.Միութիւնը շարունակեց կեդրոնացնել իր ծառայութիւնները Միջին Արեւելքի մէջ յետ-պատերազմեան շրջանին: Հայաստանը եւ Արեւելեան Եւրոպան Սովետական գրաման տակ գտնուելուն, Միջին Արեւելքի համայնները նկատուեցան հայ ազգին յոյսն ու ապագան: Դժբախտաբար, յիսունական թուականներէն սկսեալ, շրջանի քաղաքական վերիվայրումներուն

Եւ անկայուն գոյավիճակին հետեւանալով Եգիպտոսի, Սուրիոյ, Իրաքի, Լիբանանի ու Իրանի հայաբնակչութեանց մէջ ծայր տուաւ արտագաղթի նոր հոսանք մը: Իրենց ազգային ժառանգութիւնը պահպանելու մտազոհութիւնով անգամ մը եւս հայեր ապաստան փնտոնեցին այլ վայրերու մէջ: Նոր գաղթողները մեկնեցան ընդհանրապէս դէպի Միացեալ Նահանգներ, Քանադա եւ Աւստրալիա, ուր գոյութիւն ունէին արդէն հայկական գաղութներ: Այս նոր հանգրուանները փոքրամասնութիւնները կ'առաջնորդէին դէպի նոր միջավայր մը որ կը հրապուրէր կամ կը հարկադրէր ձուլումը Արեւմուտքի ընկերային-ֆաղափական մշակոյթին մէջ: Գոյութիւն չունէին այլեւս առանձին համայնքներ, որոնք կը զատորոշուէին տեղական ազգաբնակչութեանէն:

Այս նոր իրականութեան դէմ յանդիման, Միութիւնը, անգամ մը եւս, համապատասխան պատշաճ միջոցառումներով օժանդակեց Արեւմտեան երկիրներու հայագաղութներուն: Յաջորդող 35 տարիներուն ընթացքին, Հ.Բ.Ը.Միութիւնը ծաւալեց ուսումնական որակաւոր հաստատութիւններ: Դպրոցներ հիմնուեցան Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու մէջ, ինչպէս նաեւ՝ Աւստրալիա, առաջնային նպատակ ունենալով տեղական համայնքներու վարժարաններուն մակարդակով ուսում ջամբել, ու միաժամանակ յաներժացնել հայոց լեզուն, մշակոյթն ու պատմութիւնը:

Այդ աշխարհամասին շարունակուող ֆաղափական վերիվայրումները, ինչպէս նաեւ Արեւմտեան մշակոյթին հրապոյրը, աւելի ֆաջալերեցին հայերու գաղթը: Այսօր, Միջին Արեւելքի հայաբնակչութիւնը, շարունակելով հանդերձ ազգային ու աշխարհաֆաղափական կարեւոր իր դերը աւելի քան մէկ միլիոնի թիւէն նուագած է շուրջ 300,000ի: Ժամանակի ընթացքին, Կիպրոսի հայկական համայնքն ալ նուագած է ու կը հաշուէ 3000էն պակաս թիւ մը: Այս բոլորէն ետք, Խորհրդային Միութեան փլուզումը եւ Հայաստանի անկախացումը առաջնորդած են հայութիւնը արտագաղթի նոր շարժումի դէպի Ռուսաստան եւ Արեւմտեան երկիրներ:

Անցնող դարաշրջանին, երբ հայկական համայնքները կ'ենթարկուէին յարատեւ տեղաշարժերու, Հ.Բ.Ը.Միութիւնը համապատասխան ֆայլեր որդեգրած է: 21րդ

դարու սեմին, երբ ընկերային, ֆաղափական եւ նարտարագիտական պայմանները ենթակայ են արագ ու յարափոփոխ վիճակներու, անհրաժեշտ է որ Հ.Բ.Ը.Միութիւնը վերաբնէ մարդկային թէ նիւթական ներդրումներու իր կարելիութիւնները եւ երաշխաւորէ անոնց աւելի արդիւնաւէտ օգտագործումը:

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ

Ներկայիս յատուկ հիմնադրամներու եւ ընդհանուր նուիրատուութեանց շնորհիւ, Հ.Բ.Ը.Միութիւնը կը մատակարարէ եւ կամ նիւթապէս կ'օժանդակէ 17 սեփական ամենօրեայ դպրոցներու, 7 Հ.Բ.Ը.Մի շաբաթօրեայ վարժարաններու, 3 Հայորդաց Կեդրոններու Հայաստանի մէջ, Հայաստանի Ամերիկեան Համալսարանին, Երեւանի Պետական Համալսարանին, ու 20 ամենօրեայ ու շաբաթօրեայ այլ հայկական դպրոցներու: Հ.Բ.Ը.Միութեան յատկացումները—ներառեալ համալսարանական ու գոլէնական կրթաթոշակները—աւելի քան 20 երկիրներու մէջ, կը հասնին աւելի քան 5 միլիոն տոլարի:

Լոս Անճելըսի Հ.Բ.Ը.Միութեան Մանուկեան-Տեմիքնեան Վարժարանը իր 950 աշակերտներով, յաջողութեամբ կը գործէ, ու նիւթապէս ինքնաբաւ է: Մօտ աստեղէն դպրոցաշէնքը պիտի օժտուի յարակից շէնքով մը ծառայելու աւելի քան կէս միլիոն հաշուող գաղութին: Իրողութիւն է, որ Մեծն Լոս Անճելըսը այսօր ամէնէն խիտ հայաբնակչութիւն ունեցող համայնքն է Արեւմուտքի մէջ: Հ.Բ.Ը.Միութիւնը, ինչպէս, հայկական այլ հաստատութիւններ, սոյն գաղութին պիտի շարունակէ տրամադրել յաւելեալ նիւթ եւ միջոց: Նմանապէս, Տիքոյթի մէջ, Բարեգործականի Ալեքս ու Մարի Մանուկեան (Charter School) Վարժարանը, աւելի քան կրկնապատկելով, 375ի բարձրացուցած է իր աշակերտութեան թիւը, ու շնորհիւ իր կրթական յաջողութեան, դարձած է նախընտրելի ուսումնարան մը շատ մը ծնողներու համար:

Սուրիոյ մէջ, Միութեան Հալէպի Լ. Նանարեան-Գ. Կիւլպէնկեան վարժարանը իր շուրջ 1600 աշակերտներով կը ծառայէ տեղական կայուն ու ստուար գաղութին, եւ շնորհիւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նուիրատուութեան վերջերս օժտուեցաւ նոր

եւ արդիական մասնաշէնֆով մը:

Հ.Բ.Ը.Միութիւնը իր միջոցները պիտի շարունակէ տրամադրել այն հաստատութիւններուն որոնք կենսական կը նկատուին կարգ մը գաղութներու ազգապահպանման գոյատեւման:

70ական եւ 80ական թուականներուն, Լիբանանի եւ Պարսկաստանի հայ գաղութները, որոնք տուժեցին ֆաղափառական պատերազմներէն, տակաւին կը շարունակեն մնալ հայ կեանքի կոուաններ: Այս պատճառաւ, հետեւաբար, Հ.Բ.Ը.Միութիւնը պիտի նպաստաւորէ այդ շրջանի դպրոցները, բայց միաժամանակ, պիտի աշխատի առաւելագոյնս արդիւնաւորել անոնց գործունէութիւնները, աշակերտութեան թիւին ու տեղական պայմաններուն համաձայն:

Բարեգործականը կը գիտակցի իր վարժարաններու խաղացած կարեւոր դերին՝ Գանատայի եւ Հարաւային Ամերիկայի մէջ: Անկիւ պիտի շարունակէ մօտէն հետեւիլ այդ կրթարաններու զարգացումին: Մոնթրէալի, Պուէնոս Այրէսի ու Մոնթէվիտէոյի դպրոցները, իրենց աշակերտական ստուար թիւերով, եւ իրենց գաղութներուն աշխոյժ նեցուկով, պիտի շարունակեն ստանալ Հ.Բ.Ը.Միութեան օժանդակութիւնը, առիթ ընծայելով բարգաւանման կարելիութեանց:

Կարեւոր է նշել, թէ Հ.Բ.Ը.Միութիւնը լուրջ նկատաւորութեամբ պիտի ենթարկէ սակաւաթիւ աշակերտութեամբ ու պիտունէի զգալի բացերով գործող մեր վարժարաններու գոյատեւումը, մանաւանդ երբ անոնք այլեւս նոյն արդիւնաւէտութեամբ չեն գործեր: Համոզուած ենք, որ նախակրթարան մը, 120է պակաս աշակերտներով, չի կրնար հեշտօրէն նուանել ուսումնական ու մանկավարժական մակարդակ, որ նախապայմանն է մեր առաքելութեան կիրարկման: Օրինակի համար, լուրջ ուսումնասիրութեան ենթակայ է Աթէնքի Միութեան վարժարանը, ուր ընթացիկ տարուան աշակերտութեան թիւն է 64, ներառեալ Մանկապարտէզի բաժինը, տարեկան պիտունէի շուրջ 275,000 տոլարի բացով: Նմանապէս Սիտնիի մեր վարժարանը, իր 35 աշակերտով միայն, լուրջ մտահոգութեան առարկայ կը

դառնայ, նկատի առնելով անոր տրամադրուած միջոցները, որոնք գաղութին կրնան ծառայել արդիւնաբեր այլ ծրագիրներու կիրարկումով:

Համոզուած ենք, որ Միութեան տեղական Մասնահիւղերուն հետ միասնաբար գործակցելով, պիտի կարողանանք կարգ մը գաղութներէ ներս, մշակել գրաւիչ տարբեր ծրագիրներ, ինչպէս՝ շաբաօրեայ դպրոցներ, ամառնային նամբարներ, հայրենական արշաւներ, երիտասարդական արհեստավարժ խումբեր: Նկատի ունենալով որ մեր հիմնական մտահոգութիւնը կը մնայ նոր սերունդին հայեցի ուսում ջամբելը, եւ ոչ թէ սեփական վարժարան պահելու մենաշնորհը, կարգ մը գաղութներէ ներս պիտի փառաբանուին գոյութիւն ունեցող վարժարաններու միացումը: Այս ձեւով, մեր անդամները պիտի օգտագործեն իրենց նիւթական միջոցներն ու մարդուժը, անլի արդիւնաւոր գործունէութիւններ ստեղծելու ուղղութեամբ: Հաւանական է, որ կարգ մը գաղութներ կարենան օգտուիլ նման ծրագիրներու ստեղծումով, ինքնաբերաբար ծառայելով առաւել ընդլայնուած շրջանակի մը:

Գալով մեր այն վարժարաններուն որոնց չանդրադարձանք այս հանգրուանին, Բարեգործականը պիտի շարունակէ ի սպաս դնել իր բոլոր միջոցները, դիմագրաւելու եւ հարթելու անոնց դժուարութիւնները, փայլուն ապագայի մը յոյսով:

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿԻԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Յոյժ գնահատելով Մելգոնեան Եղբայրներու ազնուական նախաձեռնութիւնը, Հ.Բ.Ը.Միութիւնը ստանձնեց Մելգոնեան Կրթական Հաստատութեան հոգատարութիւնը իբրեւ հակազդեցութիւն Մեծ Եղեռնին: Մելգոնեան Հաստատութեան նպատակն էր Ցեղասպանութեան որբերը խնամել եւ ուսում ջամբել անոնց: Անցնող 77 տարիներուն, Մելգոնեանը անցած է զարգացման բազմաթիւ հանգրուաններէ: Քննարկելով Հաստատութեան պատմութիւնը կարելի է անլի լաւ ըմբռնել անոր անցեալի օրինակելի նուաճումները, ինչպէս նաեւ այն դժուար մարտահրաւերները, զորս ան դիմագրաւած է վերջին տարիներուն:

ԶԱՐԳԱՑՈՒՄԻ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ.

1926ԷՆ 1960.

ՅԱՐԱՀՈՒՆ ԴԵՐ ՈՒ ՆՊԱՏԱԿ

Սկզբնական տարիներուն, Մելգոնեան եղբայրներու տեսլականով առաջնորդուած, Հաստատութիւնը իրագործեց մարդասիրական բացառիկ նպատակներ, Օսմանեան Կայսրութեան հարթվայրերուն վրայ լուծած հազարաւոր որբերուն ապաստան հայթայթելով: Յաջորդող տարիներուն, Միջին Արեւելի մէջ հաստատուած հայերու դժուարին պայմանները նկատելով, Կեդր. Վարչութիւնը Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը որբանոցային հանգամանքէն բարձրացուց վարկաւոր (accredited) ուսումնարանի: Երբ Միջին Արեւելի հայութիւնը սկսաւ այլեւս մնայուն կայք հաստատել, Մելգոնեանը կարեւոր դեր կատարեց, ուսանող երիտասարդութիւնը պատրաստելով գաղութային դեկավար դիրքերու. մասնաւորապէս անոնք, որոնք կը ցուցաբերէին յատուկ ձիրքեր՝ արուեստներու, մանկավարժութեան, քաղաքացիական կրթութեան ուղղութեամբ, վերադարձան իրենց գաղութները եւ պաշտօնավարեցին իբրեւ ուսուցիչներ, խմբագիրներ ու գրագէտներ՝ ծառայելով հայ մամուլին, ինչպէս նաեւ հայկական վարժարաններուն եւ այլ հաստատութիւններուն աւելի զարգացնելով եւ պահպանելով հայկական ոգին Միջին Արեւելի գաղութներէն ներս: Այս հանգրուանին հայախօսութիւնը կը տիրապետէր տուններէն ներս, դպրոցներու թէ գործատեղիներու մէջ: Բարգաւանեցան հայ գաղութները, թէեւ ապրելով ինքնամփոփ, գրեթէ առանձնացած՝ տեղական ոչ-հայ բնակչութենէն:

Այս դրութիւնը, սկսաւ փոխուիլ վաթսուական թուականներէն սկսեալ, երբ Միջին-Արեւելեան երկիրները, որոնք անկախութեան տիրացած էին տասնեակ մը տարիներ առաջ, հետամուտ եղան կազմակերպուելու ազգային ինքնորոշման եւ յատկապէս արաբական դիմագիծի կերտումով: Այս ուղղութիւնը այդ շրջանի բոլոր փոքրամասնութեանց-ինչպէս նաեւ՝ հայերուն-պարտադրեց նոր կենսաձեւ մը՝ շրջապատին մէջ համալրուելու հարկադրանքով:

Բաց աստի, արաբական պաճալորեան

պարտաւորիչ դարձաւ բոլոր այն ուսանողներուն համար, որոնք կ'ուզէին բարձրագոյն ուսման հետեւիլ: Արաբներէնը դարձաւ առաջնային լեզու կրթական համակարգէն ներս: Մինչ այդ, արաբական երկիրներու հայաբնակչութիւնը առիթը չէր ունեցած, ոչ ալ ընդհանրապէս նիգթափած, սորվելու տեղական լեզուն:

Հետեւաբար, ուսումնական նոր առիթներ ստեղծուեցան գաղթաշխարհի հայ ուսանողութեան համար: Բազմաթիւ ընտանիքներ նախընտրեցին իրենց զաւակները դրկել տեղական նախակրթարան եւ երկրորդական վարժարան, այն համոզումով որ անոնք այդ կերպով յաջողութիւն պիտի գտնեն իրենց որդեգրած երկիրներուն մէջ: Ուրիշներ տակաւին նախընտրեցին Արեւմուտք տեղափոխուիլ, աւելի բարելաւ կեանքի ու կարելիութեանց համար: Այս պատճառով, Միջին Արեւելքէն Մելգոնեան եկող թեկնածուներու թիւը զգալիօրէն նուազեցաւ, այնուհետեւ Հաստատութիւնը առաջնորդելով իր երրորդ հանգրուանին:

**1970ական եւ 1980ական ԹՈՒԱԿԱՆՆԵՐ.
ՓՈՒԱՆՑՄԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿՆԵՐ**

1970ական թուականներու կէսին, ՄԿԷ բախեցաւ յարանուն դժուարութեանց թէ՛ աշակերտութեան թիւի յաւելումի եւ իր պիտունէն հաւասարակշռելու ուղղութեամբ: Ասիկա հետեւանք էր գլխաւորաբար Միջին Արեւելքէն (որ հիմնական աղբիւրն էր աշակերտութեան) եւ Յունաստանէն եկող ուսանողութեան թիւի զգալի նուազումին: Լրջօրէն նկատի ունենալով այս կացութիւնը, Կեդր. Վարչութիւնը 1975ին արդէն որոշեց փակել Հաստատութիւնը:

Այսուհանդերձ, Մելգոնեանցի շրջանաւարտներուն ինչպէս նաեւ Հաստատութեան Հոգաբարձութեան լուրջ յանձնառութեանց ընդառաջելով, Կեդր. Վարչութիւնը որոշեց առիթ մը եւս տալ, ընծայելով փորձի նոր շրջան մը: Հասկացողութեան նախապայմանն էր աշակերտութեան թիւը որոշապէս բարձրացնել, որակաւոր ուսում ջամբել, պիտունէին բացը տանելի մակարդակով նուազեցնել:

Հակառակ որ արտագաղթը Միջին Արեւելքէն կը շարունակուէր-զանգուածները հեռացնելով

Մելգոնեանէն—կացութեան մէջ բարեկաւում չարձանագրուեցաւ, բացի կարն շրջանէ մը՝ լիբանանեան ֆաղափացիական պատերազմի ու իրանեան յեղափոխութեան պատճառաւ: Այն ընտանիքները, որոնք այլազան պատճառներով չարտագաղթեցին, նախընտրեցին իրենց գաւակները ժամանակաւորապէս տեղափոխել Մելգոնեան, զերծ պահելու համար զանոնք պատերազմի վտանգներէն: Օրինակի համար, 1980ի վերամուտին, արձանագրուեցան 108 աշակերտներ (78ը՝ Լիբանանէն եւ 30ը՝ Իրանէն): Այսուհանդերձ այս հոսքը կարճատեւ եղաւ: Ընթացիկ տարեշրջանին, վերոյիշեալ երկու երկիրներէն եկած են միայն 40 աշակերտներ: Այլ խօսքով, եթէ յիշեալ երկիրներուն մէջ ծանր խռովութիւններ չպատահէին, Մելգոնեանի աշակերտութեան թիւը արդէն պիտի չարդարացնէր անոր գոյատեւումը 1970ական թուականներու վերջաւորութեան:

Հակառակ որ շրջանաւարտներու եւ Վարժարանի Հոգաբարձութեան յանձնառութիւնները չիրականացան, Կեդր. Վարչութիւնը նկատի առնելով Միութեան մտահոգութիւնը, փորձելու ֆայլ պահել տեղափոխութիւններու պատճառաւ ստեղծուած նոր պայմաններուն հետ, որոշեց անգամ մը եւս առիթը ընծայել Հաստատութեան բարգաւաճման եւ գոյատեւման: Արդարեւ, անլի հրապուրիչ դարձնելու համար գիշերօթիկի պայմանները, Կեդր. Վարչութիւնը յանդիմանական նախաձեռնութեանց դիմեց կառուցանելով արդիական երկու շէնքեր՝ 350-400 աշակերտներու նախատեսումով: Կեդր. Վարչութեան նպատակն էր Մելգոնեանը օժտել այնպիսի ենթակառոցով մը, որ կարենար մրցիլ Արեւմուտքի վարժարաններուն հետ եւ հրապուրել նոր սերունդի այն հայ աշակերտները, որոնց ծնողները—յատկապէս՝ Մելգոնեանի շրջանաւարտներ—հաստատուած էին Արեւմտեան երկիրներու մէջ:

1980ի աւարտին, կրկին նուագեցաւ Մելգոնեանի աշակերտութիւնը, երբ Լիբանանի հակամարտութիւնները մեղմացան, ու վերսկսաւ արտագաղթը դէպի Արեւմուտք: Այս պայմաններուն տակ, անհաւանական էր որ Մելգոնեանը կարենար յարգել Կեդր. Վարչութեան հանդէպ իր ստանձնած յանձնառութիւնները, հակառակ ուսանողութեան յատկացուած յանելեալ կրթաթոշակներուն: Արդարեւ, անիկա չյաջողեցաւ հրապուրել

անլի քան 200 գիշերօթիկներ նորաշէն բաժնիներուն մէջ, ուր կը նախատեսուէր 350էն 400 սաներ ընդունիլ: Այլ խօսքով, այն ակնկալութիւնները որ Արեւմտեան երկիրներ հաստատուած ընտանիքներ, եւ մանաւանդ Հաստատութեան շրջանաւարտներ որոնք Արեւմուտքի մէջ կ'ապրէին իրենց գաւակները պիտի դրկէին Մելգոնեան, ինչպէս նաեւ այն ակնկալութիւնը թէ անոնք նիւթապէս շոշափելիօրէն պիտի սատարէին մայր վարժարանին՝ երբեք չիրականացան, հակառակ որակեալ վարչական տնօրինութեան ու նուիրեալ հոգաբարձական կազմերուն: Հաստատութիւնը, այսպէս, չկարողացաւ վերագտնել իր անցեալի դիրքն ու վարկը:

1990ական ԹՈՒԱԿԱՆՆԵՐ.
ԿՐԿԻՆ ՎԵՐԱՄԱՀՄԱՆԵԼՈՎ ՄԵԼԳՈՆԵԱՆԸ

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, ՄԿՀ իր ուշադրութիւնը ուղղեց դէպի Արեւելեան Եւրոպա հրապուրելու համար նոր ազատագրուած գաղութներէն երիտասարդ աշակերտներ: Այդ աշխարհամասէն սաներ ընդունելով, նշանակելի փոփոխութիւն յառաջացաւ աշակերտական կազմին մէջ: Սակայն աշակերտութեան խառն դիմագիծը տարբեր բնոյթ ունեցաւ անցեալի Միջին Արեւելէն ժամանած ուսանողներու դիմագիծէն, որոնք կը բաժնէին հասարակաց պատմութիւն ու մշակութային հիմք: Միատեսակ չէր այլեւս աշակերտական կազմը, այլ կը յատկանշուէր բազմազանութեամբ: Թէեւ ողջունելի փոփոխութիւն մըն էր աշակերտական կազմի այլազանութիւնը, սակայն ան ստեղծեց լուրջ դժուարութիւններ ջամբելու ներդաշնակ ու միացեալ որակաւոր ուսումնական ծրագիր:

1990ական թուականներուն, շոշափելի համեմատութեան հասաւ աշակերտներու թիւը Հայաստանէն, Ալպանիայէն, Պուլկարիայէն, Ռումանիայէն եւ Ռուսաստանէն: Միութիւնը խանդավառութեամբ դիմաւորեց այս նոր իրաւիճակը, փորձի առիթ մը ընծայելով, որուն արդիւնքին հիման վրայ կրնար մշակել Մելգոնեանի ապագայ դերը հայաշխարհի իրականութեան մէջ:

ՄԵԼԳՈՆԵԱՆԸ ԱՅՍՕՐ.
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ
ԿԱԶՄԻ

2003ի վերամուտին, Մելգոնեան կրթական

Հաստատութեան մէջ արձանագրուած աշակերտութեան թիւն էր 206, որ կու գար 16 երկիրներէ՝ լեզուական ու մշակութային զանազանութեամբ: Արդարեւ, գրեթէ 10%օր ոչ-հայեր էին: Աշակերտութեան մեծամասնութիւնը կը բաղկանար Կիպրոսէն եւ Հայաստանէն ժամանողներէ: Մնացեալ աշակերտութիւնը կը բաղկանար իրանահայերէ, պուկարահայերէ, լիբանանահայերէ եւ յունահայերէ: Ցաւալի է այն իրողութիւնը, թէ կիպրացի հայ ընտանիքներուն զաւակները մեծամասնութեամբ չյանախոցեցին Մելգոնեան: Ծնողները նախընտրեցին իրենց զաւակները արձանագրել օտար վարժարաններու մէջ:

Կեդր. Վարչութիւնը համոզուած է, թէ նախկին սովետական երկիրները ժամանակի ընթացքին պիտի ընդունին Արեւմտեան աշխարհի բարբերը եւ համալրուին այդ երկիրներուն մէջ: Պուկարիոյ, Ռումանիոյ եւ Ռուսաստանի հայերը անելի պիտի հետեւին Հիւսիսային Ամերիկայի ու Ֆրանսայի իրենց հայրենակիցներու նախատագրին, քան որդեգրեն Միջին Արեւելի սերունդներուն ընկերային ու մշակութային զարգացման շեշտակիօրէն հայադրոշմ ուղին: Վերոյիշեալ երկիրներէն ժամանող սակաւաթիւ ուսանողներու դաստիարակութիւնը պիտի չբարարէ, իրենց համայնքներու հայապահպան կարիքներուն գոհացումը: Այդ գաղութները անելի հակամէտ պիտի ըլլան օգտուելու հայապահպանումի տեղական տարբեր միջոցառումներէն, որոնք պիտի տարածուին Միութեան նախաձեռնութեամբ, քաջալերութեամբ կամ օժանդակութեամբ:

Հայաստանէն Մելգոնեան յանախոցները կը ներկայացնեն Հաստատութեան աշակերտութեան 20%օր: Հ.Բ.Ը.Միութիւնը պիտի շարունակէ նեցուկ կանգնիլ Հայաստանի կրթական համակարգին բարձր ուսում ջամբելու նիւթերուն եւ պիտի քաջալերէ այդ աշակերտները որ իրենց երկրորդական ուսումը ստանան հայրենիքի մէջ:

Լիբանանէն եկող աշակերտներու ճօշք թիւը անելի եւս պիտի նուազի: Հ.Բ.Ը.Միութիւնը Լիբանանի մէջ կը պահէ երեք վարժարաններ, որոնց աշակերտութեան ուսումնական կարիքները կը հոգացուին շատ անելի տրամաբանական ծախսերով, մանաւանդ որ այդ հաստատութեանց աշակերտութիւնը, անցեալին բաղդատմամբ նուազած է 50%

համեմատութեամբ: Սոյն վարժարանները պատրաստ են, ներկայիս, Լիբանանէն Մելգոնեան յանախոց սակաւաթիւ աշակերտները ընդունելու:

Մելգոնեան յանախոց կիպրացի աշակերտներ կը վայելեն պետական կրթանապաստ ստանալու առանձնաշնորհումը եւ կարիքը չունին գիշերօթիկի դիւրիւնութիւններուն եւ մեծամասնութեամբ ցերեկօթիկ արձանագրուած են, սակայն արժանի են նախակրթարանական եւ երկրորդական որակաւոր հայկական ուսմանց: Կիպրոսի մէջ կը գործեն 3 հայկական նախակրթարաններ: Կեդր. Վարչութիւնը լրջօրէն կ'ուսումնասիրէ զանազան կարելիութիւններ ապահովելու համար կիպրահայ ուսանողներու երկրորդական որակաւոր տոհմիկ դաստիարակութիւնը:

**ՄԵԼ ԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ.
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ**

Այս վերագնահատումին ընթացքին, Մելգոնեանի ֆինանսական յարատեւ բացերը, նկատի առնուելով հանդերձ, առաջնահերթ մտահոգութեան առարկայ չեն եղած Կեդր. Վարչութեան յանգած որոշումին մէջ, այլ Կեդրոնը իր ուշադրութիւնը սեւեռեց Մելգոնեանի տարիներու գործունէութեան արդիւնաւորումին վրայ ազգային կեանքի ծիրէն ներս, զայն բաղդատելով անցեալի փայլուն դերին որ կատարուած էր մինչեւ 1960-ական թուականներու աւարտը: Եթէ ներկայիս Մելգոնեանը նուազէր 1960 թուականներու իր արդիւնաւէտութիւնը, կամ եթէ անոր ներկայ կարգուսարքը իր աշակերտութեան հայթայթէր բացառիկ առիթներ, նիւթական շօշափելի յատկացումները արդարացած պիտի ըլլային: Դժբախտաբար, այդ չէ պարագան, հակառակ Հոգաբարձական Մարմնի, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմի ժրաջան ու նուիրեալ ջանքերուն:

Մելգոնեանի ուսանողներուն մեծամասնութիւնը չի հոգար դպրոցական ծախսերը, որոնք բաղդատմամբ շրջանի տեղական կրթարաններուն շատ անելի նուազ են: Արդարեւ, 2002ին, ուսանողութեան 18%օր միայն վնարեց ամբողջական թոշակ, մինչ անելի քան 40%օր ոչ մէկ վնարում կատարեց, իսկ շուրջ 40%ն ալ՝ միայն մասնակի վնարում կատարեց:

Կեդր. Վարչութիւնը բժախնդրօրէն քննարկեց ՄԿՀ նիւթական կարիքները 1990էն ի վեր: Օրինակի համար, եթէ նկատի ունենանք անոր 2003-2004 տարեշրջանի պիտոնէն, հետեւեալ պարագաները կարելի է մատնանշել.-

- Տարեկան նախատեսուած ընդհանուր ծախսն է՝ 1,107,200 Կիպրական Ոսկի, 206 աշակերտի համար, ներառեալ 149 գիշերօթիկ աշակերտները:
- Նախատեսուած ընդհանուր եկամուտն է 498,000 Կ.Ո., որ կը ներկայացնէ կրթարանի ծախսերուն 45%ը: (Այս մուտքին մէջն են Կիպրական պետութեան 66,900 Կ.Ո.-ի յատկացումը, ինչպէս նաեւ՝ աշակերտական կրթաթոշակի գանձումները՝ շուրջ 300,000 Կ.Ո., ՀԲԸՄի գանձազան Հիմնադրամներէն տրամադրած կրթաթոշակները՝ 42,000 Կ.Ո.):
- Հ.Բ.Ը.Միութեան յատկացուցած ամսվարկն է 609,200 Կ.Ո., որ կը հոգայ ընդհանուր ծախսերուն 55%ը:

Յիշեալ հաշուետուութենէն կը պարզուի որ տակաւին կարիքը կայ արտաքին շօշափելի օժանդակութեան: Միջին հաշուով, Հ.Բ.Ը.Միութիւնը այս տարեշրջանին տրամադրած է մօտ 6,000 տոլար իւրաքանչիւր աշակերտի համար:

Կեդրոնական Վարչութիւնը կարեւորութեամբ գնահատումի ենթարկած է ՄԿՀ ներկայ գործունէութիւնը, հայ զանգուածներու յարատե տեղափոխութիւններուն հետեւանքները, ինչպէս նաեւ անոնց անդրադարձը ուսանողութեան բաղկացուցիչ խմբաւորումներուն վրայ, ու վերջապէս՝ տնտեսական բեռը: Կեդր. Վարչութիւնը որոշած է, եւ խորապէս համոզուած, որ համայն հայութիւնը անլի պիտի նպաստատրուի ազգապահպանման իր առաքելութեան մէջ Մեկգնեանի կտակի հասոյթներու յատկացումներուն վերադասատրումով: Մեկգնեան եղբայրներու տեսլականով ու Բարեգործականի առաքելութեան ծիրին մէջ նոր ծրագիրներ պիտի մշակուին ու գործադրուին Կիպրոսի մէջ եւ այլուր:

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Մեկգնեան եղբայրները իրենց թողօնը

վստահած են Հ.Բ.Ը.Միութեան, եւ հետեւաբար Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է տնօրինելու եւ պիտի տնօրինէ հարկն ու պատշաճը մշակուելիք նոր ծրագիրներով, անոնց նուիրատուութեան միջոցաւ: Տարիներու ընթացքին, Բարեգործականը կրած է ծանր պատասխանատուութիւնը մատակարարելու անլի քան 900 մնայուն թողօններ ու նուիրատուութիւններ: Կազմակերպութեան խնամակալի պարտականութիւնն է, իր կառավարող մարմնին-Կեդրոնական Վարչութեան միջոցով ապահովել շարունակականութիւնը թողօններու եկամուտներու օգտագործումին իրենց որոշեալ նպատակին, համապատասխան կազմակերպութեան առաքելութեան, հասնելով համայն հայութեան յարանուն կարիքներուն: Անցնող դարաշրջանին, բազմաթիւ ազգայիններ Բարեգործականին վստահած են իրենց կտակներն ու նուէրները, այն համոզումով, որ ան ամէնէն խոհեմ ու օգտաւէտ կերպով պիտի տնտեսէ այդ աւանդը: Միութեան առաքելութեան յաջողութիւնը կ'ապահովուի այն պարագային երբ ան կարողանայ շարունակել վայելել իր բարեբարներուն վստահութիւնը: Կազմակերպութիւնը չի կրնար ու պիտի չանտեսէ անցեալի իր նուիրատուներուն փափաքները, մասնաւորաբար կամքը Մեկգնեան եղբայրներուն, որոնք մեծագոյն բարեբարներէն են Միութեան:

ՅԱԻԵՐԺԱՑՆԵԼՈՎ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Կարապետ ու Գրիգոր Մեկգնեան եղբայրները եղած են իրենց ժամանակի բացառիկ դէմքերէն, որոնք ունեցած են տեսլական ու տոգորուած են բարեսիրական զգացումներով իրենց հայրենակիցներուն հանդէպ: Մինչեւ այսօր անոնք մեր ժողովուրդին մեծագոյն բարեբարներէն կը նկատուին:

Մեկգնեան եղբայրները Հ.Բ.Ը.Միութեան վստահեցան մատակարարումը իրենց նուիրատուութեան, որ բարձր մակարդակով ծառայէ հայ ժողովուրդի ազնուագոյն նպատակներուն: ՄԿՀ կալուածին նուիրատուութիւնը 1926ին կատարելէ ետք Բարեգործականին, Կարապետ Մեկգնեան իր 1930ի կտակին մէջ, Հ.Բ.Ը.Միութիւնը նշանակած է իրրեւ միակ ժառանգորդ ու կտակակատար իր մնացեալ ինչքերուն:

Հ.Բ.Ը.Միութիւնը, իր Կեդրոնական Վարչութեան միջոցով, ստանձնեց ամբողջական պատասխանատուութիւնը պահպանելու կտակին արժէքը, ապահովելով որ անոր եկամուտները յատկացուին հայկական ժառանգութեան յանձնարարման, նոր սերունդներու յառաջդիմութեամբ եւ ուսումնական զարգացումով:

Միութիւնը կը վերահաստատէ իր աւանդական այն տեսակէտը, թէ կրթութիւնը ամէնէն արժէքաւոր միջոցն է պահպանելու ու զօրացնելու հայկական ինքնութիւնը: Այսօրուան ազգային կեանքի իրականութեան դիմաց, կարեւոր է ֆննարկել ետք բնորոշել, թէ ի՞նչ միջավայրի մէջ կ'ապրին այն երիտասարդները զորս կ'ուզենք դաստիարակել եւ ի՞նչ են պայմաններն ու պահանջները իրագործելու այնպիսի ծրագիրներ որոնք կը յանձնարեն մեր հարուստ ու փառաւոր ժառանգութիւնը: Նոր իրականութիւններ կը ստեղծեն նոր հրամայականներ՝ հայերէն լեզուն հետզհետէ կրնայ նուազ գործածուիլ մեր երիտասարդ սերունդին կողմէ, այսուհանդերձ, հայկական ոգին միշտ վառ կը մնայ մեր երիտասարդութեան մօտ: Պէտք է փառաբանել այս նոր սերունդը որպէսզի ան պահէ հայոց լեզուն ու մշակութային ժառանգութեան իւրացումը շիրի դարուն: Հ.Բ.Ը.Միութիւնը պիտի շարունակէ նաեւ թիկունք կանգնել հայրենարնակ ժողովուրդին, քանի նորանկախ Հայաստանը կարիքն ունի ֆինանսական ու բարոյական մեծ զօրավիգի:

Իր կրթական առաքելութեան վերաբերումին ընթացքին, Հ.Բ.Ը.Միութիւնը անդրադարձած է, թէ սփիւռփակ պատանիներուն շուրջ 90%ը չի յանախել հայկական դպրոց: Արտաշխարհի այն երկիրներուն մէջ, ուր Բարեգործականը կը ծառայէ իր գործունէութիւնը, կ'ապրին շուրջ 2.5 միլիոն հայեր, որոնց դպրոցական տարիքի զուակներուն թիւը մօտաւորապէս 400,000 կը գնահատուի: Համոզուած ենք, թէ այս թիւին միայն 10%ը հայկական վարժարաններ կը յանախէ: Նման տուեալներու լոյսին տակ, Հ.Բ.Ը.Միութիւնը հարկադրուած կը նկատէ միջոցներ որոնելու նաեւ հասնելու համար երիտասարդութեան մնացեալ 90%ին, որ հայկական վարժարաններ չի յանախել: Կեդրոնական Վարչութիւնը կը հաւատայ, թէ Մեկգոնեան եղբայրները պիտի ակնկալէին Բարեգործականի դեկավարութենէն ապագայ

իր գործունէութեան ծիրէն ներս ընդգրկել խիզախ նախանձեռնութեամբ ծրագիրներ, որոնք նշանակելի անդրադարձ պիտի ունենային հայկական հաւաքականութեանց վրայ, ինչպէս ՄԿՀ ունեցած էր իր սկզբնական շրջանին:

ԱՅԼ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Իր ներկայ կրթական եւ զանազան այլ գործունէութեանց առընթեր Բարեգործականը փորձառութեամբ յաջողած է նոր սերունդը հետաքրքրող ծրագիրներ մշակել, կազմակերպած է Արհեստավարժ Երիտասարդներու (Young Professionals) խմբաւորումները, ասպարէզային մասնագիտութեան ամառնային վարժութիւնները (Summer Internship Programs), ամառնային ցամաքները, շաբաթօրեայ եւ հայերէն լեզուի երեկոյեան վարժարաններ, եւ արուեստի ծրագիրներ (programs in the arts), մշակութային բարձր մակարդակի ձեռնարկներ, օտար լեզուով դասախօսութիւններ եւ հրատարակութիւններ, յառաջացնելու հայկական մշակոյթը՝ անոնք կը շարունակեն դրական յառաջդիմութիւն արձանագրել իւրայատուկ ձեւով: Հարկ է ստեղծել նաեւ անլի նորանոր ծրագիրներ, զանոնք տարածելով համայն հայութեան: Ներկայ ժամանակներու արագօրէն փոփոխող արդիական գիտարուեստէն (technology) հարկ է օգտուիլ, ինչպէս պարագան է Internetի ընծայած արդիական միջոցներուն: Մենտոր կամ խորհրդատու (mentoring & shadowing) հանդիսանալ օտար վարժարաններ յանախող հայ աշակերտներու, կամ հայկական գործունէութիւններ ծառայել օտար վարժարաններէ ու համալսարաններէ ներս:

Այսօրուան Հայրենիքի իրողութիւնը մեզ կը հրապուրէ նաեւ մշակելու այնպիսի ձեռնարկներ որոնք խթան կը հանդիսանան նոր սերունդը մօտեցնելու հայրենի հողին, կազմակերպելով շրջապտոյտներ դէպի Հայաստան՝ շրջագայութեան եւ ուսումնասիրութեան համար, զանազան այլ ձեռնարկներ:

Կեդրոնական Վարչութիւնը ՄԿՀի ապագային առնչութեամբ իր ուսումնասիրութեան ընթացքին, ֆննարկեց նաեւ նոր ծրագիրներ, որոնք անլի լայն ու մանրամասն ուսումնասիրելէ ետք պիտի գործադրուին Մեկգոնեան եղբայրներու նուիրատութեան հասոյթներուն միջոցաւ: Այս ծրագիրներուն

նպատակն է հասնիլ անլի տարածուն հայաշխարհին:

Կեդրոնական Վարչութիւնը կը հաւատայ, թէ սփիւտֆահայութեան ինֆնութիւնը եւ հայ մշակոյթին ժառանգութիւնը պահելու ամէնէն հզօր միջոցներէն մէկը Հայաստանի հետ յարաբերութիւնն է: Հայոց լեզուին ու տոհմիկ ասանդութեանց պահպանումը պիտի շարունակէ դժուարին պարտականութիւն մը դառնալ, երբ ապագայ սերունդները անլի ցրուին ու շաղուին այլ մշակոյթներու հետ: Հակառակ յիշեալ փոփոխութեանց սփիւտֆահայ հաւաքականութիւններէն ներս Հայաստանը պիտի մնայ հիմնական շաղկապը՝ մեր նոր սերունդը իր հայկական ժառանգութեան զօտող:

Կը ծրագրուի Հայաստանի մէջ հիմնադրել երիտասարդական համալիր մը՝ Մելգոնեան Կրթական Կեդրոն անուամբ, ուր տարուան տարբեր եղանակներուն հիւրընկալուին միանգամայն մօտ 200 անհատներ, առիթ ընծայելու եւ հրապուրելու համար հայ երիտասարդները որ տարբեր գաղութներէն այցելեն հայրենիք: Այս նոր Կեդրոնը կրնայ երիտասարդ սերունդին ընծայել միջոցներ ուսման ու մշակութային ինֆնութեան դաստիարակութեան ծրագիրներու: Ան պիտի օժտուի արդիական բաժանմունքներով, հաստատուելիք այլազան դասանիւթերով, համակարգիչներով ու լեզուական տարրալուծարանով (language lab): Այս հիմնարկը պիտի ընծայէ արդիական տոհմիկ դաստիարակութիւն սփիւտֆահայ բազմատեսակ ուսանողներու, մօտէն ծանօթանալու հայկական մշակոյթին եւ պատմութեան: Այս ձեռնարկը ներկայիս լուրջ ուսումնասիրութեան առարկայ է Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Այլ կարելիութիւն մըն է նաեւ միջոցներ ստեղծել սփիւտֆահայ երիտասարդ ուսանողներուն դասընթացներու հետեւելու Հայաստանի մէջ գտնուող բարձրագոյն ուսման հաստատութիւններուն մօտ, ինչպէս Հայաստանի Ամերիկեան Համալսարանը կամ Երեւանի Պետական Համալսարանը, արտասահմանի իրենց յանախած բարձրագոյն ուսման հաստատութիւններուն եւ Հայաստանի միջեւ մշակուելիք փոխանակութեան մասնաւոր ծրագրի միջոցաւ (exchange programs):

Կեդրոնական Վարչութիւնը կը նախատեսէ նաեւ Կիպրոսի մէջ պահել Մելգոնեան

Երկրորդական Վարժարան մը տեղւոյն հայ ընակչութեան համար: Նկատի առնուած է նաեւ այնտեղ հաստատել հայագիտական հետազօտութեանց կեդրոն մը:

Իրրեւ խորհրդանշական երախտագիտութիւն՝ Մելգոնեան Հաստատութեան ընծայուած գրեթէ հարիւրամեայ ասպնջակնութեան համար Կիպրոսի մէջ, Կեդր. Վարչութիւնը լրջօրէն կը ֆննարկէ հիմնել Եւրոպական եւ ազգագրական պրպտումներու համար ուրիշ Կեդրոն մը, Մելգոնեան անուան տակ, որ առիթը պիտի ընծայէ բոլոր Կիպրացի ուսանողներու, ներստեալ՝ հայերու, հետեւելու ուսումնական յայտագիրներու: Այս ծրագրին մշակումը պիտի համադրուի պետական բարձրագոյն կրթարաններու միջոցաւ, Կիպրոսի Համալսարանին կամ արեւմտեան հեղինակաւոր ուսումնարանի մը հետ:

Խորհրդային Միութեան փլուզումէն իվեր զանգուածային տեղափոխութիւններ յառաջացած են սփիւտֆահայ կեանքէն ներս: Ներկայ նակատագրական ժամանակներուն, ուշադրութիւն հարկ է ընծայել Ռուսաստանի, Հիւսիսային եւ Արեւելեան Եւրոպայի հայագաղութներու կարիքներուն:

Բարեգործականը կոչուած է դիմաւորելու այս նոր մարտահրաւերները, եւ Կեդրոնական Վարչական Ժողովը անհրաժեշտ կը նկատէ ուսումնասիրել կարիքները այդ շրջաններուն մէջ՝ տրամադրելու եւ զարգացնելու համար նոր կրթական ծրագիրներ ինչպէս նաեւ մշակութային ու երիտասարդական կեդրոններ՝ պահպանելով եւ յանրաժանելով հայ մշակոյթը, լեզուն եւ պատմութիւնը:

Անլի մանրամասնութեամբ ուսումնասիրելու համար վերոյիշեալ նախաձեռնութիւնները եւ անոնց գործադրութիւնը Կեդրոնական Վարչութիւնը մօտիկ ապագային պիտի նշանակէ խորհրդատու մարմին մը:

* * *

ՄԿՀի ապագային նկատմամբ որոշում մը կայացնելը դժուարին պատասխանատուութիւն մըն է Կեդրոնական Վարչութեան համար: Անցնող երեսուն տարիներուն Կեդրոնի գլխաւոր մտահոգութեան առարկայ դարձած է Մելգոնեանը: Կը վստահեցնենք հանրութիւնը,

որ իւրաքանչիւր անգամ որ մաս կազմած է Կեդրոնական Վարչութեան այս տարիներուն, տագնապած է այս հարցով, ու գիտակից է, թէ որքան լրջութեամբ նկատի առնուած է անոր պարագան: Բաժնետէլ հանդերձ շատերուն մտահոգութիւնը, համոզուած ենք, որ ժամանակի ընթացքին մեր ներկայ որոշումը պիտի հանդիսանայ իբրեւ առողջ քայլ մը՝ յօգուտ հայութեան, պահպանելու եւ յանրժացնելու համար հայկական մեր մշակութային ժառանգութիւնը, արագօրէն փոխուող եւ համաշխարհայնացած նոր հասարակարգէ մը ներս:

Այս առիթով կ'ուզենք մեր երախտագիտութիւնը յայտնել բոլոր մեր կտակարարներուն եւ բարերարներուն, Միութեան հաւատաւոր անդամներուն, ինչպէս նաեւ հայ ժողովուրդին, Հ.Բ.Ը.Միութեան աշխատանքին ու ծաւալած գործունէութեանց հանդէպ իրենց ցուցաբերած վստահութեան: Համոզուած ենք, որ մեր ծրագիրները պիտի շարունակեն բեղմնաւորել հայութեան կեանքը ի սփիւռս աշխարհի:

Կեդրոնական Վարչական Ժողով
Հայկական Բարեգործական
Ընդհանուր Միութեան
Նիւ Եորք

Մարտ 16, 2004

